

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2017 թվականի _____ N _____-Ա

«ՇԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ» ՓԱԿ
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՆ ՕՏԱՐ ԼԵԶՎՈՎ (ԱՆԳԼԵՐԵՆ) ԿՐԹՈՒԹՅՈՒՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 6.1-ին մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 21-ի N 1072-Ն որոշման հավելվածի 7-րդ կետի պահանջով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Թույլատրել «Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիր» փակ բաժնետիրական ընկերությանը 2017-2018 ուսումնական տարվանից միջնակարգ կրթության երրորդ աստիճանի 11-12-րդ դասարաններում իրականացնել «Միջազգային բակալավրիատի դիպլոմա» ծրագիրն անգլերենով՝ 3 տարի ժամկետով:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով նախատեսված «Միջազգային բակալավրիատի դիպլոմա» ծրագիրն իրականացվում է ոչ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:

ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ «ՇԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՐԹԱՎԱՆ ՀԱՄԱԼԻՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՆ ՕՏԱՐ ԼԵԶՎՈՎ (ԱՆԳԼԵՐԵՆ) ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է կրթական հաստատությանը տրված օտար լեզվով (անգլերեն) կրթություն կազմակերպելու թույլտվության եռամյա ժամկետը նոր ուսումնական տարվա սկզբին ավարտվելու հետ կապված այն ևս երեք տարով երկարաձգելու հարցը օրենսդրությանը համապատասխան կարգավորելու, ինչպես նաև ընկերության փոփոխված անվանմանը համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ:

2. Ընթացիկ իրավիճակը և կարգավորման նպատակը

«Երևանի Անանիա Շիրակացու անվան ճեմարան» կրթահամալիր» փակ բաժնետիրական ընկերությունը (պետական գրանցման համարը՝ 282.120.03148), որի իրավահաջորդը «Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիր» փակ բաժնետիրական ընկերությունն է (այսուհետ՝ Ընկերություն) («Երևանի Անանիա Շիրակացու անվան ճեմարան» կրթահամալիր» փակ բաժնետիրական ընկերության 28.01.2000 թվականին գրանցված կանոնադրության թիվ 001.2 փոփոխությունը գրանցված է Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունների պետական ռեգիստրի կողմից 2017 թվականի մարտի 31-ին) 2013-2014 թվականների ընթացքում հավատարմագրվել է Միջազգային բակալավրիատի (ՄԴ) բոլոր երեք կրթական (միջնակարգ) ծրագրերով: Ընկերության ավագ դպրոցը ՄԲ Դիպլոմային ծրագիրն իրականացնելու հավատարմագիր ստացել է 2014 թվականի հունիսի 25-ին, որի հիման վրա համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 6.1 մասի և ՀՀ կառավարության 2011 թվականի հուլիսի 21-ի N 1072-Ն որոշման հավելվածի 7-րդ կետի պահանջի՝ ՀՀ կառավարությունը 2014 թվականի սեպտեմբերի 18-ի N 999-Ա որոշմամբ թույլատրել է Ընկերությանը 2014-2015 ուստարվանից միջնակարգ կրթության երրորդ աստիճանի 11-12-րդ դասարաններում իրականացնել ՄԲ Դիպլոմային ծրագիրն անգլերենով՝ 3 տարի ժամկետով:

2015-2016 ուստարում Ընկերության ՄԲ Դիպլոմային ծրագրի անդրանիկ շրջանավարտները (12 սան) հանձնել են ինչպես ՀՀ պետական ավարտական, այնպես էլ ՄԲ Դիպլոմային ծրագրի ավարտական քննությունները և ստացել են համապատասխանաբար ատեստատներ ու դիպլոմներ: Ընկերության շրջանավարտների ՄԲ դիպլոմների միջին գնահատականը կազմել է 33 միավոր (10 %-ով ավելի բարձր, քան ՄԲ համակարգում ընդգրկված 4655 դպրոցների միջին միավորը):

2016-2017 ուստարում ՄԲ Դիպլոմային ծրագիրն ավարտում են 6 սաներ, որոնք արդեն իսկ հանձնել են ավարտական քննությունները (արդյունքները ՄԲ կենտրոնական գրասենյակի կողմից կիրառարակվեն ս.թ. հուլիսի 5-ին):

Նշված երկու տարիների ՄԲ Դիպլոմային ծրագրի բոլոր 18 շրջանավարտներն էլ ընդունվել են արտերկրի բարձր վարկանիշ ունեցող բարձրագույն ուսումնական հաստատություններ, որոնցից 5-ին տրամադրվել է 100 % և 2-ին՝ 50 % կրթաթոշակ:

Նկատենք, որ 2016-2017 ուստարվա ավարտին Ընկերությունն ունի ՄԲ Դիպլոմային ծրագրի 2-րդ կուրս (12-րդ դասարան) փոխադրված 14 սաներ:

Հարկ է նշել նաև, որ Ընկերությունն ունի ՄԲ Դիպլոմային ծրագրի իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական ուսումնական բազա, ինչպես նաև բարձր մասնագիտական որակավորում ունեցող և ՄԲ-ի կողմից վերապատրաստված աշխատակազմ:

Ակնկալվող արդյունքը

Հաշվի առնելով Ընկերության կողմից արձանագրված վերը նշված արդյունքները, ակնկալվում է, որ Ընկերությունը շարունակաբար իրականացնելով ՄԲ Դիպլոմային ծրագիրը, կապահովի միջազգային ամենաբարձր չափանիշներին համապատասխանող կրթություն, ինչը մի կողմից դրական ազդեցություն կունենա հանրապետությունում կրթության ընդհանուր որակի բարձրացման վրա, կնպաստի աշխարհում հայկական կրթական համակարգի հեղինակության հետագա աճին, իսկ մյուս կողմից հնարավորություն կընձեռի ՄԲ Դիպլոմային ծրագրի շրջանավարտներին ընդունվելով միջազգային բարձր վարկանիշ ունեցող արտասահմանյան բարձրագույն ուսումնական հաստատություններ, դառնալ իրենց ընտրած բնագավառների որակյալ մասնագետներ՝ դրանով իսկ նպաստ բերելով երկրի առաջընթացին:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ «ՇԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՆ ՕՏԱՐ ԼԵԶՎՈՎ (ԱՆԳԼԵՐԵՆ) ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ կառավարության որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ «ՇԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՆ ՕՏԱՐ ԼԵԶՎՈՎ (ԱՆԳԼԵՐԵՆ) ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՌԻՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՈՒ ԾԱԽՍԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ պետական բյուջեում եկամուտների ու ծախսերի էական ավելացում կամ նվազում չի նախատեսվում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ «ՇԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՆ ՕՏԱՐ ԼԵԶՎՈՎ (ԱՆԳԼԵՐԵՆ) ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՍՏԱՅՎԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

№	Առարկության, առաջարկության հեղինակը, Գրությանստացման ամսաթիվը, գրությանհամարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություն
1.	ՀՀ ֆինանսների նախարարություն	Նախագծի 1-ին կետի 2-րդ ենթակետում նշված «2-րդ կետում» բառերը փոխարինել «1-ին կետում» բառերով:	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն
2.	ՀՀ արդարադատության նախարարություն	<p>1.Նախագծի 1-ին կետում անհրաժեշտ է «սեպտեմբերի 18-ի» բառերից հետո լրացնել ««Երևանի Անանիա Շիրակացու անվան ճեմարան» կրթահամալիր» փակ բաժնետիրական ընկերությանն օտար լեզվով (անգլերեն) կրթություն կազմակերպելու թույլտվություն տալու մասին» բառերը՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի պահանջների:</p> <p>2.Նախագծի 1-ին կետի 2-րդ ենթակետում անհրաժեշտ է «2-րդ» բառը փոխարինել «1-ին» բառով՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 18-ի N 999-Ա որոշման 1-ին կետի պահանջների:</p>	<p>1. Ընդունվել է</p> <p>2. Ընդունվել է</p>	<p>1. Կատարվել է համապատասխան փոփոխություն</p> <p>1. Կատարվել է համապատասխան փոփոխություն</p>